Ծանուցում
«ՀԿԵ» ՓԲԸ-ի Երևան կայարանի շենքի աջ թևի շինության անշարժ գույքի վարձակալության պայմանագիր կնքելու իրավունքի մասին
Գնանշման հարցում
№ ՀԿԵ-ԳՀ022/035

կ/կ	Գնման գործընթացի չափանիշներ	Գնման պայմաններ
1.	**Գնման տարբերակ**	**Գնանշման հարցում թղթային տարբերակով**
2.	Գնման գործընթացի կազմակերպողի անվանումը, գտնվելու վայրը, հասցեն, էլեկտրոնային հասցեն, կոնտակտային հեռախոսահամար	Կազմակերպող՝ «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ Նյութատեխնոլոգիական ապահովման տնօրինություն (հետագայում՝ «ՀԿԵ» ՓԲԸ ՆՏԱՏ) Գտվելու վայրը՝ ք.Երևան, Արցախի պող., 32 Փոստային հասցե՝ 0005, ք.Երևան, Արցախի պող., 32 Էլեկտրոնային փոստ՝tender@railway.am Կոնտակտային հեռախոս՝ +374 (60) 46-31-74
3.	Գնման գործընթացի առարկան:	«ՀԿԵ» ՓԲԸ-ի Երևանի կայարանի շենքի աջ թևի վարձակալություն:
4.	Գտնվելու վայրը:	Վարձակալության տրամադրվող շինությունները գտնվում են Երևան քաղաքում, Տիգրան Մեծի պողոտա 86, "ՀԿԵ"ՓԲԸ Երևանի կայարանի շենքի աջ թևում: Վարձակալության ենթակա տարածքի մակերես 327,84 մ^2.
5.	Պայմանագրի մեկնարկային (նվազագույն) գինը (չափաբաժնի գինը) կամ ապրանքի միավորի, աշխատանքի, ծառայության արժեքը	Պայմանագրի մեկնարկային (նվազագույն) գինը կազմում է՝ 1 893 319 (մեկ միլիոն ութ հարյուր իննսուներեք հազար երեք հարյուր տասնինը) ՀՀ դրամ: ներառյալ ԱԱՀ:
6.	Գործընթացի հաղթող	Գնանշման հարցման հաղթող է ճանաչվում այն մասնակիցը, որն առաջարկել է առավել բարձր գին:
7.	Կնքված պայմանագրով վճարման պայմանները	Գնորդը վճարում է անկանխիկ հաշվարկով՝ փոխանցելով դրամական միջոցները հաշվարկային հաշվին: Կանխավճար նախատեսված չէ. Վարձակալական վճարն ամբողջությամբ փոխանցվում է Վարձատուի հաշվին՝ Համաձայն կնքված պայմանագրի պայմանների, հաշիվ/ապրանքագիր տրամադրելուց հետո՝ 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում:

8.	Գնման գործընթացի փաստաթղթերի տրամադրման ժամկետը, տեղը և կարգը	Փաստաթղթերը տեղադրվում են «ՀԿԵ» ՓԲԸ կայքում: Փաստաթղթերը հասանելի են «ՀԿԵ» ՓԲԸ կայքում առանց սահմանափակումների հրապարակման պահից:
9.	Գնմանը մասնակցելու հայտերի ներկայացման ժամկետի սկզբի կարգը, ամսաթիվը և ժամկետը:	Հայտերը ներկայացվում են երկու փակ ծրարներով՝ «Բնօրինակ» և «Պատճեն» հստակ մակնշմամբ: Հայտերի ներկայացման մեկնարկի ամսաթիվը՝ կայքում ծանուցման հրապարակման պահից «15» ապրիլի 2022թ. 9: 00 -18:00 Հայտի ներկայացման վերջնաժամկետը՝ «28» ապրիլի 2022թ. 9 : 00 -18:00 Ծրարները՝ մինչև գնումների կազմակերպչին հանձնելը (Արցախի 32, ՆՏԱՏ, սենյակ 212 հասցեով) ենթակա են գրանցման "ՀԿԵ" ՓԲԸ անվտանգության ծառայության կողմից (Տիգրան Մեծի 86 հասցեում, Երևան կայարան):
10.	Տեղեկատվություն՝ մրցակցային գնումների փաստաթղթերում նշված պահանջներին չբավարարելու մասին	Պատվիրատուն կարող է մերժել գնանշումների հայտերը հետևյալ դեպքերում. 1) գնանշման հայտը չի համապատասխանում գնանշումների հարցման մեջ նշված պահանջներին; 2) պայմանագրի գնի (չափաբաժնի գնի) և/կամ ապրանքի, աշխատանքի, ծառայության միավորի գնի վերաբերյալ գնանշման հայտում առաջարկությունը գերազանցում է պայմանագրի սկզբնական (առավելագույն) գինը (չափաբաժնի գինը) և/կամ ապրանքի, աշխատանքի, ծառայության միավորի սկզբնական (առավելագույն) գինը (եթե այդպիսի գին սահմանված է); 3) հրաժարվում է գնանշումների հարցման անցկացումից; 4) մասնակցի կողմից գնանշման հայտի դրույթների վերաբերյալ պարզաբանումներ չներկայացնելը (պատվիրատուի պահանջի առկայության դեպքում):
11.	Գործընթացից հրաժարվելու իրավունքը	Կազմակերպողն իրավունք ունի հրաժարվել գնման գործընթացից ցանկացած պահին՝ մինչև հայտի դիտարկումը և մասնակցության իրավունքի տրամադրումը, որևէ պատասխանատվություն չկրելով ցանկացած ֆիզիկական և իրավաբանական անձանց առջև, որոնց նման գործողությունը կարող է վնաս պատճառել, ինչպես նաև փոփոխել գնման գործընթացի անցկացման

		վերաբերյալ ծանուցումը հայտերի ներկայացման վերջնաժամկետից 1 օր առաջ:
12.	Պայմանագրի կնքման ժամկետը	Գնման գործընթացի արդյունքներով կազմված մրցութային հանձնաժողովի ամփոփիչ արձանագրության ստորագրման օրվանից հաջորդող 10 օրվանից ոչ շուտ և 20 օր ոչ ուշ: